**Արձանագրություն N 2-1**
**ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-25/16 ծածկագրով «Երևանի Սիլվա Կապուտիկյանի անվան հ. 145 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի նորոգման աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի**

ք.Երևան 08.09.2025թ.
ժամը 11:00

Մասնակցում էին՝

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ | Ա. Եղիազարյան |
| Անդամներ՝ | Ա. Աչոյան |
| | Ս. Գասպարյան |
| | Ս. Իշխանյան |
| Հանձնաժողովի քարտուղարի պարտականությունները կատարող՝ | Գ. Հակոբյան |

Բացակայում էր հանձնաժողովի անդամ՝ Ա. Խաչատրյանը

**1. Գնման ընթացակարգի հայտերի բացման օրվա և ժամի, ինչպես նաև՝ հայտ ներկայացրած մասնակցի մասին**

(Ա. Եղիազարյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ

ա) մինչև հրավերում փոփոխությունների կատարման համար սահմանված վերջնաժամկետը լրանալը, հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել,

բ) գնման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով 2025 թվականի սեպտեմբերի 8-ին ժամը 11:00-ին,

գ) գնման ընթացակարգին հայտ է ներկայացրել հետևյալ կազմակերպությունը.

ՀՀ դրամ

| Հ/Հ | Մասնակցի անվանումը | Գնման գին | Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) | ԱԱՀ | Ընդհանուր գինը |
|---|---|---|---|---|---|
| 1 | «Ռեմ Տեխնիկ» ՍՊԸ | **278 298 500** | 230 755 800 | 46 151 160 | 276 906 960 |

Մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված չէ գնումների գործընթացին իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ - 0:*

**2. Հայտ ներկայացրած մասնակցի անվանումը, գործունեության հասցեն, կապի միջոցը, էլ. հասցեն**

(Ա. Եղիազարյան)

| Հ/Հ | Մասնակցի անվանումը | Գործունեության հասցե | Կապի միջոց | Էլեկտրոնային փոստի հասցե |
|---|---|---|---|---|

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1 | «Ռեմ Տեխնիկ» ՍՊԸ | Ք. Երևան,<br>Հ. Թևոսյան 1/5 | 099 44 70 30 | tender.companion@gmail.com<br>- |

**3. Գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը և վայրը հաստատելու մասին**

---

(Ա. Եղիազարյան)

3.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 67-րդ և հրավերի 8.21 կետերը՝ մասնակցի կողմից ներկայացված տվյալների իսկությունը ստուգելու նպատակով գնահատող հանձնաժողովը որոշեց հարցում կատարել՝

1. ՀՀ պետական եկամուտների կոմիտե՝ հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների ընթացքում շինարարության ոլորտում համախառն եկամտի հանրագումարը 100 000 000 ՀՀ դրամից պակաս չլինելու մասին,

2. Պաշտպանության նախարարություն և ՀՀ տարածքային զարգացման հիմնադրամ՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ վերջին 3 տարիների ընթացքում 1 000 000 ՀՀ դրամի չափով նախկին պայմանագրային պարտավորությունների ընթացքում պատվիրատուի կողմից սահմանված տույժ և (կամ) տուգանք չունենալու մասին:

3.2 Հայտի գնահատման նիստը հրավիրել իրավասու մարմինների կողմից եզրակացությունները ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրը ժամը 11:00-ին, ՀՀ քաղաքաշինության կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ - 0:*

Հանձնաժողովի

Նախագահ՝ ______________________ Ա. Եղիազարյան

Անդամներ՝

______________________ Ա. Աչոյան

______________________ Ս. Գասպարյան

______________________ Ս. Իշխանյան

Արձանագրությունը կազմեց հանձնաժողովի քարտուղարի պարտականությունները կատարող՝ ______________________ Գ. Հակոբյան